թիւ քարերու միջից հաղիւ երկու տապանագիր կարողացած եմ օրինակել։

Քարի շուրջն բոլորշի գրուած.

«Ցիշեցէք ի Քս. Աստ. Ե. ի բարեխաւսութիւն Դաւթի որ կար . . . »։

Բոլորշու մէջը գրուած.

«ՈՒԱ թվականիս Կանկնէ. աւ խաչս».

Ներքևի տողերն եղծուած և քարի մէկ մասն կոտրած՝ որոյ վերան տեսայ [1]։

«Թու Դ մի Աստ. ողորմեայ սմայ»։

Աբասկօլ հայ գիւղն Գայլատոյ ծովակէն 1 ժամ ի հիւսիս, 55—60 տուն հայ և 20 տուն թուրք բնակիչ ունի, այս տեղ է կառավարութեան մաքսատունը և զաղախներու փոշան։ Գիւղս լեռներով շրջապատուած մի խոր վայր բռնած է։

Գիւղս կայ ս. Սարգիս անունով եկեղեցի, ուր ուխտի կը գնայ միշտ հայ ժողովուրդն։

Այս տեղ գերեզմանաքարի մի վերայ գրուած տեսայ. «Իսպաւուրի որդի Սարգիս որբս խայչս կամեցցան»։

Մի այլ «Այս է տապան Տէր Աստ. ատուրին Պ. Տ.»։

Բարձր դիրքի մի վերայ մի այլ գերեզմանատան մէջ տապանագիր մի որ արաբական և լատինական տառերու քիչ նմանութիւն ունէր։

Կարգ մի տապանագիրներ միջոց չեմ ունեցած օրինակելու։

1. Վստահ կասեմ որ Փարչինիս գիւղն խուզարկութիւնք անողն պիտի գտնէ շատ հին եւ բազմաթիւ արձանագրութիւնք. որոց մեծ մասին ականատես եղած եմ։